21 FEB 2013

1-й ЭКЗ
08 MAR 2009

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ

# ВЕСТНИК архивов Армении

1(22)

1969

ԵՐԵՎԱՆ ЕРЕВАН

1. Հիմնականում Արարատյան դաշտում բնակվող սուրմալվեցիներից համալրված գնդապետ Դոլուխանյանի 6-րդ գունդը (600—700 սվին).

2. Գնդապետ Պերեկրյոստովի պարտիզանական գունդը (շուրջ 800 սվին).

3. Փոխգնդապետ Կորոլկովի հեծյալ գունդը (շուրջ 300 թուր).

4. Գնդապետ Սիլինի հատուկ պարտիզանական գունդը (շուրջ 600 սվին).

5. Զեյթունցիների հեծյալ գունդը (300 թուր).

6. Կապիտան Երվանդ Մամաջանյանի կամրջապահ գումարտակը (150 սվին).

7. Գնդապետ Հակոբյանի հատուկ գումարտակը (շուրջ 300 սվին).

8. Շտաբի վաշտը, որի հրամանատարն էր հին բոլշևիկ, պորուչիկ Ռուբեն Դաշտոյանը:

9. Գնդապետ Խորեն Իգիթյանի մարտկոցը.

10. Գնդապետ Կարաքեշիշյանի մարտկոցը.

11. Կապիտան Կլիշի մարտկոցը.

12. Կապիտան Աթանեսյանի մարտկոցը.

13. 1918 թվականի ապրիլ ամսին Երևանյան զորաբանակի մեջ մտան Վանից նահանջած 5-րդ գունդը՝ գնդապետներ Պողոս Փիրումյանի և Տեր-Պողոսյանի հրամանատարությամբ (սկզբում շուրջ 700 սվին).

14. Երևանում կազմակերպված վանեցիների գունդը՝ գնդապետ Լևոն Զաքուխչյանի հրամանատարությամբ (1200 սվին).

15. Վանից նահանջած թուրքական ծառայության սպա Տիգրան Բաղդասարյանի զորամասը (շուրջ 200 սվին). (Օլթիի կռվից և Կարսի անկումից հետո վանեցիների գնդերը վերակառուցվեցին ու միացվեցին 4-րդ գունդ անունով, շուրջ 800 սվին).

16. Ալեքսանդրապոլի ճակատից Արարատյան դաշտը նահանջած գնդապետ Զայինովի հեծյալ գունդը (շուրջ 300 թուր).

17. Ալեքսանդրապոլի ճակատից նահանջած գնդապետներ Ղասաբբաշյանի, Մանյանի և կապիտան Ալեքսանդր Շնեուրի զորամասերը (ընդհանուր գումարով շուրջ 700 սվին):